ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

Հ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3702-Ա «18» նոյեմբերի 2015 թ.

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» № 1204-Ն որոշման 2-րդ կետով.

1. Սահմանել, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման հետ կապված հարաբերությունները կանոնակարգվում են «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Տեղեկատվություն տնօրինողի կողմից մշակված կամ նրան առաքված տեղեկությունների գրանցման, դասակարգման և պահպանման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական հիմնարկների ու կազմակերպությունների կողմից տեղեկության կամ դրա կրկնօրինակի (պատճենի) տրամադրման կարգը սահմանելու մասին» №1204-Ն, Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 12-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին գործավարության կարգը հաստատելու մասին» № 747-Ն և Երևանի քաղաքապետի 2011 թվականի մայիսի 5-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում պայմանագրերի մշակման, ստորագրման, հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին» №1653-Ն որոշումներով սահմանված պահանջներով:

2. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձ նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի տեղակալ Ա.Կարապետյանին:

3. Հանձնարարել տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու պաշտոնատար անձին՝ Արգիշտիի փողոցի հ.1, Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 և Երևանի վարչական շրջանների ղեկավարների նստավայրերի վարչական շենքերում գործող «Մեկ պատուհան» գրասենյակների աշխատանքների կազմակերպման և վարման պատասխանատվությունը կրող պաշտոնատար անձանց (հավելված), ինչպես նաև «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության միջոցով.

1) ապահովել «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի №1204-Ն և Երևանի քաղաքապետի 2015թ. մարտի 12-ի №747-Ն որոշումներով սահմանված տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը.

2) տեղեկատվություն փնտրողին մատչելի ձևով բացատրել տեղեկատվության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը.

3) մշակել ստացված հարցումների, այդ թվում՝ առցանց եղանակով վիճակագրական և ամփոփ տվյալները:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս.Մակարյանի վրա:

5. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ